Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Թատերական ներկայացումը որպես սովորողների հաղորդակցման կարողությունների զարգացման միջոց
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Սոֆիա Լևոնի Պետրոսյան Ֆրանսերենի ուսուցչուհի 091213319 sophiepetrossian@gmail.com 10_12_րդ դասարաններ

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	119 ավագ դպրոց ecole119@mail.ru 010573730

Պետք է լինի **1-2** էջ

Բովանդակություն 1_2

Ներածություն 3

Հիմնական բովանդակություն 5

Եզրակացություններ, առաջարկություններ 7

Օգտագործված գրականության ցանկ 9

Հավելվածներ 10

1 էջ

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Նպատակը՝ գործնական աշխատանքներով՝ թատերական ներկայացումների, երգերի, խաղերի դիալոգների միջոցով սովորեցնել ֆրանսերեն: Հարցը հետևյալն է՝ Գործնական ի՞նչ աշխատանքներով է հնարավոր արդյունավետ դարձնել ֆրանսերենի ուսուցումը ավագ դպրոցում:
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	119 ավագ դպրոցի 10-12-րդ աշակերտներ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտական մեթոդ՝ դիտում:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	3 - 4 ամիս

1-2 էջ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններ ից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	1.,Ստեֆաննի Բերտհրատ"Ամերիկյան երազանք" 2.Լորան վան Վատեր "Նորից ամառ" 3.Վ.Հյուգո "Փարիզի Աստվածամոր տաճարը" Ըստ վերը նշված ստեղծագործությունների, ինչպես նաև իմ կողմից գրված և բեմադրված սցենարների:

Հետազոտության ընթացքը	«Երեխան,որը չի խաղում, երեխա չէ, իսկ մեծահասակը, որը չի խաղում կորցրել է այն երեխային, որը ապրում է իր մեջ» Պաբլո Ներուդու Մեր օրերում շատ կարևոր է սովորել մեկ կամ ավելի օտար լեզու: Օտար լեզուների իմացության կարևորությունը քննարկման կարիք չունի: Դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու նոր մշակույթներ և բացում են դեպի այլ երկրներ տանող դռները: Լեզուները թույլ են տալիս նաև ավելի լավ ըմբռնել մեր սեփական մշակույթային ինքնությունը և գիտակցել ազգերի միջև եղած տարբերությունները: Լեզվական գրագիտությունը միջազգային փոխհարաբերությունները զարգացնելու լավագույն միջոց է: Օտար լեզուների իմացությունը ցանկացած անհատի, այդ թվում աշակերտի անձի հաստատման աղբյուր է: Լեզու սովորելու առաջին քայլերը սկսվում են դպրոցից: Ճիշտ մեթոդներով աշխատելը, աշակերտներին ներգրավելը, նրանց ունակությունները և կարողությունները, ստեղծագործական միտքը զարգացնելն ու վեր հանելը ուսուցչի աշխատանքի կարևոր մասն են: Արդյունավետ վերջնարդյունք ունենալու համար կարևոր է ճիշտ մեթոդ կիրառելը: Յուրաքանչյուր մեթոդ ընդունելի է, եթե այն ունի արդյունք: Մեթոդաբանական գրականության մեջ կան լեզվաուսուցման երեք առանցքային մոտեցումներ՝ կառուցվածքային (լեզուն դիտարկվում է որպես քերականական տարրերի կապակցման համակարգ), գործառական (լեզուն դիտարկվում է որպես որոշակի գործառույթների արտահայտման և

	իրականացման գործիք) և ինտերակտիվ (լեզուների դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման միջոց): Ելնելով իրենց տարիքային հոգեֆիզիոլոգական առանձնահատկություններից՝ աշակերտները միշտ հետաքրքրված են խաղով կամ խաղային իրադրություններով, քանի որ վերջիններս ուսումը դարձնում են ավելի հետաքրքրաշարժ և ստեղծագործական: Ուսուցման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար առանձնակի նշանակություն ունի ուսուցման՝ նպատակին ծառայող ճիշտ մեթոդի կամ մեթոդաբանություն հնարի ընտրությունը: Օտար լեզուների ուսուցման ընթացքում հաղորդակցման հմտություններ ձևավորելով և օտար լեզուների գործնական կիրառման համար աներկբայելի նշանակություն ունեն հատկապես դերային խաղերը և բառախաղերը: «Ասա ինձ և ես կմոռանամ, ցույց տուր ինձ և ես կհիշեմ, մասնակից դարձրու, և ես կսովորեմ»,-ֆրանսերեն սովորեցնելու գործընթացում առաջնորդվում եմ այս կարգախոսով: Հնարավո՞ր է դպրոցում աշխուժացնել օտար լեզվի ուսուցումը: Ինչ առավելություններ կարող է ունենալ լեզվի դասերի և միջոցառումների ժամանակ դերային խաղի օգտագործումը: Նոր լեզու սովորելը անկախ սովորողի տարիքից և ըստ ավանդական ուսուցման մեթոդների՝ ամենից առաջ կատարվում է լսելու, գրելու և կարդալու միջոցով: Լսողությունը և տեսողությունը այդ դեպքում ամենաշատ պահանջվող զգայարաններն են՝ խթանելու աշակերտի հիշողությունը: Թեև մենք՝ ուսուցիչներս, բազմիցս աշակերտներին

կոչ ենք անում ակտիվորեն մասնակցել դասերին, աշակերտը գտնվում է պասիվ դիրքում: Ծարժումն ու երկխոսությունը կնպաստեն և կխթանեն նախնական ուսուցումը:

Լեզու սովորելու սկզբնական փուլում աշակերտը հեռու է այն զգալուց, անգիր սովորած նախադասությունը հաղորդակցվել կիրառելու համար մեծ ջանք կպահանջվի, քանի որ լեզուն դեռ չի տպավորվել :Եվ հենց այստեղ թատրոնը կարող է միջամտել մանկավարժական գործունեությանը՝ թույլ տալով աշակերտին գործնականում կիրառելու իր ձեռք բերած գիտելիքը: Թատրոնը կօգնի նրան կայուն կերպով ամրապնդելու լեզվական գիտելիքները՝ բացելով լեզվական բնազդ: Բացի դրանից՝ թատերական ներկայացումը նաև թույլ կտա աշակերտին որոշ ժամանակ կտրվել քերականությունից, որը հաճախ հոգնեցնող է: Բեմի փորձը աշակերտին հնարավորություն կտա բացելու իր ստեղծագործական հնարավորությունը և համոզված լինել, որ այս նոր լեզվով ինքը կարող է արտահայտվել և շփվել: Բեմում օտար լեզվով մեկնաբանելով տվյալ իրավիճակը՝ աշակերտը կկարողանա ակտիվացնել իր ֆիզիկական և զգացմունքային հիշողությունը: Շատ պարզ մի իրավիճակ. ռեստորանում հաշիվ պահանջելը ավելի լիարժեք կմնա աշակերտի մտքում, քանի որ այն զգացվում է, վերապրվում և նույնացվում է ժեստերի, իրավիճակի և հույզերի հետ: Թատրոնը դասերին ներդնելու միջոցով տրամադրվող խաղային շրջանակը թույլ կտա ուսուցչին վերակենդանացնել իր մանկավարժությունը:

ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ

Մասնակից լինելով սեփական ուսումնառության պլանավորման,

	իրականացման և վերլուծության գործընթացին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել: Դերային խաղը գործնական աշխատանքի այն տեսակն է, որը լայնորեն տալիս է այդ հնարավորությունը: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե որպես ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ ունի կոնկրետ նպտակներ: Հետևաբար պետք է հանգամանորեն պլանավորել դերախաղը' նախապես սահմանելով նպատակ և վերջնարդյունք: Դերախաղերը սովորաբար իրականացվում են 3 փուլով. .նախապատրաստական փուլ .խաղի փուլ .անդրադարձի փուլ Առաջին փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք մասնակիցները պետք է պահպանեն: Բաժանվում են դերերը: Դերասանները կարդում են և մտածում իրենց դերի մասին: Երկրորդ փուլում խաղացողները արտահայտում են իրենց զգացմունքները: Ցանկացած դերասանի համար կան կանոններ, որոնց պահպանումը արդյունավետ աշխատելու և լավագույն արդյունքի հասնելու հնարավորություն կտա: Դասարանում դերային խաղերի օգտագործումը նպաստում է փորձի ձեռքբերմանը: Դրանք կարող են նաև լինել հանպատրաստից, նախապես չմշակված: Դերային խաղի նպատակն է. 1.Զարգացնել սովորողի իմացական գործընթացները (մտածողություն,երևակայություն,ուշադրություն) և հուզակամային ոլորտը (հույզեր,զգացմունքներ), ստեղծարարությունը:

2.Զարգացնել սովորողի հնարավորությունը տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը, աշխատասիրությունը, հետևողականությունը:
3.Ձևավորել իր և իր ընկերների գործունեությունը գնահատելու կարողությունը: Զարգացնել անհատական խմբային աշխատելու կարողությունը: Միմյանց հարգելու և փոխօգնության ցուցաբերելու պատրաստակամությունը: Ուսուցիչը պետք է խրախուսի դերային խաղերը դասարանում՝ զարգացնելով օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունները, կարողությունները, բանավոր խոսքը : Սովորողը պետք է լինի սեփական կրթության դերակատարը:

ԻՄ ՓՈՐՁԸ

Կցանկանայի հաղորդել իմ անձնական մեթոդը, որն արդեն 20 տարի տալիս է ցանկալի արդյունք լեզվի ուսուցման գործում: 2002 թվականին որոշեցի մտնել մի խելահեղ գործի մեջ, որի մասին երազել էի միշտ: Լինելով թատրոնի մեծ սիրահար՝ օբյեկտիվ պատճառներով չմտա այդ ասպարեզ, բայց նաև չէի խաղաղվում, որովհետև ասելիք ունեի: Պետք էր դատարկել այն մեծ կուտակումը, որն ունեի: Նշեմ, որ դիպլոմային աշխատանքիս թեման կապված էր ժամանակակից ֆրանսիական դրամատուրգիայի հետ : Եվ ահա մի քիչ վախվորած անցա գործի: Պիտի ներկայացնեի 《Փարիզի Աստվածամոր տաճարը》 երաժշտական ներկայացումը, որը նվիրված էր Հյուգոյի 200 ամյակին: Ներգրավեցի 14-16 տարեկան պատանիների: Սկսեցինք աշխատել, և ես հասկացա, թե ինչ մեծ պատասխանատվություն եմ վերցրել: Մի պահ փորձում էի առիթ գտնել և հրաժարվել այդ

ծրագրից, բայց երեխաները այնքան ոգևորված էին ու պատրաստակամ, որ ես պատրաստ էի անցնել բոլոր հնարավոր խոչընդոտները: Այդ տարիներին համացանցից օգտվելու հնարավորությունները բացակայում էին: Աշակերտները պատրաստ էին գտնել բոլոր երգերի մինուսները, անթերի սովորել ֆրանսերեն և պատրաստ էին այդ բոլորը անկաշկանդ ներկայացնել պրոֆեսիոնալ բեմում: Ներկայացումը իր ավարտական վիճակին հասցրինք 4 ամիս օր ու գիշեր աշխատելու շնորհիվ: Ունեցանք մեծ հաջողություն: Մեր մասին գրեցին և պահանջեցին նորից ցուցադրել: Հաջողությունը գլխապտույտ էր: Այս ներկայացման մեջ իր բեմական առաջին քայլն արեց սիրված երգիչ Գոռ Սուջյանը: Արդյունքում բոլոր մասնակիցները ոչ միայն ֆրանսերեն սովորեցին, այլև այդ լեզվով երգել և խաղալ բեմում: Նրանցից շատերը հիմա օտար լեզվի մասնագետներ են կամ բեմի մարդիկ, իսկ իմ մեծ գնահատականը նրանց երջանկությունից փայլող աչքերն էին: Այս ներկայացումը մոտիվացրեց ինձ հաջորդների կայացման գործում: Ձեռքբերումներից մեկն էլ այն էր, որ աշակերտները ծանոթացան ֆրանսիական գրականությանը և Ֆրանսիա երկրին: Ոգևորված շարունակեցի իմ գործունեությունը՝ կիրառելով արդյունավետ մեթոդը: Կազմակերպեցի մի շարք միջոցառումներ: Հերթական ներկայացումը նվիրված էր Ծառլ Ազնավուրի 85- ամյակին: Ներկա էին Ազնավուրի քույրն ու աղջիկը՝ Սեդա Ազնավուրը: Նրանք շատ բարձր գնահատեցին մասնակիցների՝ ֆրանսերենի անկաշկանդ, ճիշտ իմացությունը և կիրառումը:
2016 թվականին բեմի տեխնիկան թեմայով ստաժավորում անցա Բուլղարիայում:

Ստաժավորումը կազմակերպել էր "10×10" կազմակերպությունը: Այն Լեհաստանում միջազգային թատերական կենտրոն է, որի նպատակն է իրականացնել ֆրանսերեն լեզվի ուսուցման բազմազան ծրագրեր թատրոնի միջոցով: Ծրագրի շրջանակներում ներկայացվեցին Ֆրանկաֆոն հեղինակների պիեսներ՝ գրված 10 էջի վրա,10 դերասանի համար և 10 օրում: Պիեսները հիմնականում դեռահասների և երիտասարդների համար էին: Այս փորձը կարելի է կիրառել նաև հայաստանյան դպրոցներում: 2017 թ.հրավեր ստացանք մասնակցելու Երևանում կայանալիք երիտասարդ ֆրանկաֆոն թատերական միջազգային ֆեստիվալին: Ներկայացրինք "Ամերիկյան երազանք"_ը: Արդյունքում ստեղծվեց աշակերտական մի անզուգական խումբ, որն անվանվեց «Les dremeurs»: Խաղացինք երկու ներկայացում, մեկը՝ 2017 թվականին, որտեղ ստացանք գլխավոր մրցանակը, մյուսը՝ Գյումրիում 2018 թվականին:

Պիեսների ընտրությունը կատարելիս առաջնորդվում էի հեղինակի նկատմամբ ունեցած համակրանքով: Առաջին պիեսը՝ «Ամերիկյան երազանք»_ը էմիգրանտների մասին էր , որոնք 19_րդ դարասկզբին գաղթել էին Ամերիկա՝ Էլիս կղզի: Պիեսը հիմնված էր պատմական փաստերի վրա: Մեր ժողովրդի անցած ուղու հետ զուգահեռները շատ էին, ինչը ավելի մեծացրեց աշակերտների հետաքրքրությունը: Թեման ծանր էր, սակայն աշակերտների նվիրվածության և համառ ջանքերի շնորհիվ ունեցանք ցանկալի արդյունք:

Մյուս ներկայացումը պատմում էր Բեռլինի պատի կառուցման և այն մարդկանց ճակատագրի մասին, որոնք փորձեցին գաղտնի անցնել պատից այն կողմ: Ներկայացմանը

	նեկա էր հեղինակը, որի հիացմունքն անսահման էր: Սակայն ամենակարևորը աշակերտների պատմական, լեզվական, քաղաքագիտական գիտելիքների ձեռքբերումն էր, և իհարկե ֆրանսերենի հրաշալի իմացության դրսևորման հնարավորությունը: Այս դեպքում մենք ապահովեցինք նաև միջառարկայական կապ (ֆրանսերեն_պատմություն,աշխահագրություն): Ֆրանսերեն սովորեցնելու իմ նախընտրած մեթոդներից է երգերի միջոցով լեզու սովորեցնելը (այդ թվում Ազնավուրի ոչ ճանաչված գործերից): Ֆրանսիացի հեղինակների գործերը թագմանելը ևս տվել է ցանկալի արդյունք:: Ուսուցիչը պետք է ունենա հոգևոր հարստություն, բարոյական բարձր հատկանիշներ, արժեհամակարգ, գեղագիտական կրթվածություն, որ կարողանա ներգործել աշակերտի վրա և հասնել իր առջև դրված նպատակին: Հակառակ դեպքում նա չի կարող իրականացնել նուրբ և դժվարին մանկավարժական գործունեություն: Յուրաքանչյուր մեթոդ օտար լեզվի ուսուցման համար ունի իր առավելությունները, որոնք հիմք են հանդիսանում ուսուցումը ավելի հաջողված կազմակերպելու համար:

Մոտավոր **10** էջ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտական մեթեդի՝ դիտման կիրառությամբ եկել եմ հետևյալ եզրակացության, որ Ֆրանսերենի ուսուցման ընթացքում թատերական ներկայացումների, դերախաղերի, երգերի, բնագրերից թարգմանությունների, երկխոսությունների կիրառման արդյունքում՝ 1.ավելանում է հետաքրքրությունը առարկայի նկատմամբ. 2.զարգանում է լեզվական մտածողությունը. 3.բացահայտվում են աշակերտների ունակությունները. 4.դպրոցական կյանքը դառնում է ավելի հետաքրքիր. 5.ձևավորվում է առանց ժամանակային սահմանափակման ստեղծագործելու հնարավորություն:
Այլ տեղեկատվություն	

1-2 ᏧᏬ

Օգտագործված գրականության ցանկ

1.Inalco https:#alumini.inalco.fr.article Fle Le theater Comme outing pedagogique
2.0pen Edition https:#journals openditon.org
L'enseignement par le theater en classes de fr.
3.La Cimade
https:www.lacimade.org.theatre etc formation
Theatre et apprentissage du francais
Blogger
http:targmanir.blogstop.com
Ինչո՞ւ է կարևոր օտար լեզու սովորելը այկական կրթական միջավայր
hhttp:#lib.armedu.am.files>resource>files
Օտար լեզու առարկայի ուսուցման մեթոդները

1 էջ

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	

Ընդգրկված չեն հիմնական էջերի մեջ